ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ info@moh.am

ՍՔ/[175460]-14 2014-04-09

Հարգելի գործընկեր

«ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/1-2014/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու ***«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/1»*** շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ: Ծառայությունների ձեռքբերման պայմանները ներկայացված են պայմանագրի նախագծում:

Սույն գնման գործընթացն իրականացվելու է էլեկտրոնային ձևով՝ **www.armeps.am** էլեկտրոնային կայքի միջոցով:

Հայտերը կարող եք ներկայացնել մինչև սույն թվականի **ապրիլի 22-ը** ժամը «17**:00**»:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված «7-րդ» աշխատանքային օրը ժամը «17:00»-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***«ՀՀ ԱՆ ԱՇԲԾ-ՇՀԾՁԲ-11/1-2014/5»*** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԱՆ «ԱԾԻԳ» ՊՀ
Գայանե Գաբրիելյան
Հեռ. (010) 29 75 36

ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՇՀԾՁԲ-11/1-14/5»

ք. Երևան « » « » 2014թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և « » -ն, ի դեմս տնօրեն ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն ստանձնում է **«Ինտերնետ կապի տրամադրման ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված Ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունները և վճարել դրա համար:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N2 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրն խախտելն էական է համարվում, եթե

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայությունը, իսկ Ծառայության մատուցման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության մատուցումն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայությունների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Ծառայությունների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ( ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայության մատուցման դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պատրավորությունների կատարման ավարտը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողն հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը մեկ անգամ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջերից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 Հավելվածները և N 1-ին Հավելվածին կից բաշխման ցուցակը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ առողջապահության նախարարություն, ք.Երևան,Կառավարական. տ. 3 ՀՎՀՀ 02507171 ՀՀ ԱՆ-ի ՖՆ Կենտրոնական Գանձապետարանի հաշվեհամար Հ/Հ 900011105161	
---	---
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 4
<<____>> _____20 թ. կնքված N _____
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	**Պատվիրատու**
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Կատարողը՝ ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » « » 2014թ. կնքված
N ՀՀԱՆՇՀՃՔ-11/1-2014/5 գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

N	Ձեռքբերման ենթակա ծառայության անվանումը	Չափի միավորը	Քանակը	Բնութագիրը
1	Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ	դրամ	44	ՀՀ առողջապահության նախարարության առանձնացված ստորաբաժանման (ԱՊՏ) մարզային կենտրոնների կարիքների համար անհրաժեշտ է շարժական ինտերնետ կապի տրամադրման և սպասարկման շուրջօրյա ծառայություններ: Կատարողը պետք է ապահովի ինտերնետ կապի անհրաժեշտ արագությունը, հուսալիությունը և տվյալների փոխանակման գաղտնիությունը: Կատարողը պետք է ինտերնետ կապի հետ կապված խնդիրները լուծի առավելագույնը 24 ժամվա ընթացքում: Կատարողը պետք է ապահովի ինտերնետ կապի շուրջօրյա տրամադրում յուրաքանչյուր կետում անխափան ոչ պակաս քան 3 գբ գերարագ ինտերնետ, իսկ լիմիտը գերազանցելու դեպքում արագությունը չպետք է նվազի 256կբ/վ-ից, ապահովի սպասարկում և տեխնիկական աջակցում: Ցանցի բարելավման պլանավորված ցանցային աշխատանքների հետևանքով ինտերնետ ծառայության ընդհատումների մասին պետք է զգուշացվի առնվազն մեկ օր շուտ: **Հավելված 1-ին կից Բաշխման ցուցակով** ներկայացված են ՀՀ ԱՆ ԱՊՏ մարզային կենտրոնների հասցեները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ առողջապահության նախարարություն,
ք.Երևան,Կառավարական. տ. 3
ՀՎՀՀ 02507171
ՀՀ ԱՆ ՖՆ Կենտրոնական
Գանձապետարանի
հաշվեհամար
Հ/Հ 900011105161

Ստորագրություն
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 2

« » « » 2014 թ. կնքված

N ՀՀ ԱՆ ՇՀԾՁԲ-11/1-2014/5 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժնի համարը	Գնման ենթակա աշխատանքների		Նախատեսվում է գնել	ԸՆԴԱՄԵՆԸ	
	Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը	Չափման միավոր		Գին	Գումար /ներառյալ ԱԱՀ/
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
	Ծրագիրը՝ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարության աշխատակազմի մասով)			**Բաժին 07 Խումբ 06 Դաս 02 Ծրագիր 01**	
1	Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ	դրամ	Պայմանագրի կնքման պահից 30 աշխատանքային օր հետո մինչև 31.12.2014թ.		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն,
ք.Երևան,Կառավարական. տ. 3
ՀՎՀՀ 02507171
ՀՀ ԱՆ ՖՆ Կենտրոնական Գանձապետարանի
հաշվեհամար
Հ/Հ 900011105161

ստորագրություն
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____
ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 3

« » « » 2014 թ. կնքված

N ՀՀԱՆՇՀԾՁԲ-11/1-2014/5 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝								ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐԵԿԱՆ
	Անվանումը	*Մայիս*	*Հունիս*	*Հուլիս*	*Օգ.*	*Սեպ.*	*Հոկ*	*Նոյեմբեր*	*Դեկտեմբեր*	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*
Ծրագիրը՝Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարության աշխատակազմի մասով)										**900011105161**
1	Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ	45%	45%	70%	70%	70%	100%	100%	100%	100%
ԸՆԴԱՄԵՆԸ										

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն,
ք.Երևան,Կառավարական. տ. 3
ՀՎՀՀ 02507171
ՀՀ ԱՆ ՖՆ Կենտրոնական
Գանձապետարանի
հաշվեհամար
Հ/Հ 900011105161

ստորագրություն
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____
ստորագրություն
Կ.Տ

Բաշխման ցուցակ

N	Անվանումը	Հասցեն
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն, այդ թվում		
1	Արագածոտնի մարզային կենտրոն	ք. Աշտարակ, Աշտարակեցու 7
2	Արարատի մարզային կենտրոն	ք. Արտաշատ, Արամ Խաչատրյան 120
3	Արմավիրի մարզային կենտրոն	ք. Արմավիր, Սայաթ-Նովա 122 վարչական շենք
4	Վայոց Ձորի մարզային կենտրոն	ք. Եղեգնաձոր, Շահումյան 1
5	Գեղարքունիքի մարզային կենտրոն	ք. Մարտունի, Շահումյան փող. 17շ.,ք. Սևան, Նաիրյան 169,ք. Գավառ, Ազատության փող. 21 շենք
6	Լոռու մարզային կենտրոն	ք. Վանաձոր, Գ. Նժդեհի փող. թիվ 14, 4-րդ հարկք. Ալավերդի, Թումանյան 7 ք. Սպիտակ, Երևանյան խճուղի 1ք. Ստեփանավան, Մխիթար Սպարապետի 2
7	Կոտայքի մարզային կենտրոն	ք. Աբովյան, Կոտայքի փող. թիվ 1/4
8	Շիրակի մարզային կենտրոն	ք. Գյումրի, Շիրակացի 64
9	Սյունիքի մարզային կենտրոն	ք. Գորիս, Գուսան ն Աշոտ 30, ք. Կապան, Շինարարների 1, ք. Մեղրի, Մելիք Օհանջանյան 4, ք. Սիսիան, Արցախի 1
10	Տավուշի մարզային կենտրոն	ք. Իջևան, Տերյան 12
11	«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	«Զվարթնոց» միջազգային օդանավակայան
12	Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	
13	Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	
14	«Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	
15	Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	
16	Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	
17	Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ	